

(Բնդհ. 160): Բայց յուսալի չէ որ Հայք համակերպած լինին այդպիսի կարգադրուած թեան մը, եւ յետադասած կամ զրկած իրենց մեծամեծար բարեկամները:

Ծ. — Օրհնութիւն: — Տարբեր էր տեառնականի կանոնէն՝ ըստ մեր ծանօթ աղբերաց, եւ Որբելեան զայն Ս. Եփրեմի կ'ընծայէ, ու Ղազար թարգմանչէն ի Հայս բերուած կը համարի (ՀԿՃ. Ժ): — Շնորհալին այսպէս կը նկարագրէ զայն: Քահանայք՝ որքան որ կան՝ պիտի հաւաքուին եկեղեցւոյ դուռը, եւ իրենց հետ երթալու է «տէր պատարագին», ինչպէս կը կոչուէր նուիրատուն: Հոն, կ'ըսէ, թող աղը դնեն խաչին առջեւ (աստ, 343), երգեն զրուած սաղմոսը, եւ կատարեն ընթերցումներն ու աղօթքը: Կը յաւելու՝ թէ այս պաշտօնը կատարուելու է «երկիւղիւ մեծաւ», ուզելով արգելուլ այն ժխորն եւ անկարգութիւնը՝ որ ի հնուց յատուկ էր հայ ժողովրդեան՝ հոգեւոր պաշտամանց պահուն (աստ, 253). եւ ջերմեռանդ սրտիւ, կ'ըսէ, յիշեն մեռելոյն անունը, անոր մեղաց թողութիւն խնդրելով: Ապա տան աղն անասնոյն եւ մորթեն (Բնդհ. 160):

Ա. Այդ նկարագիրը ամփոփումն է Մաշտոցին պաշտաման, որ հետեւեալն է՝